Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 20 -ի N 588 - Ա որոշման

ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԹԻՎ 4 ԼՐԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն), որի անունից, որպես լիազոր ներկայացուցիչ, հանդես է գալիս Արտյոմ Մովսեսյանը, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության _____ թվականի _____ որոշման հիման վրա (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, 1) մի կողմից, և «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ կառավարիչ) (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02562664, գտնվելու վայրը՝ 0010 Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մաշտոցի 13, գործունեության հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան-42, Զվարթնոց միջազգային օդանավակայան, ԱՄՕ-ի շենք), ի դեմս տնօրեն Խուան Պաբլո Գեչիջյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա և օժտված է բավականաչափ լիազորություններով՝ ստորագրելու սույն փաստաթուղթը, մյուս կողմից (կառավարությունը և կառավարիչը միասին՝ այսուհետ՝ կողմեր), հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

A. 2001 թվականի դեկտեմբերի 17-ին կառավարությունը և «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»-ն կնքել են պայմանագիր «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի (այսուհետ՝ օդանավակայան) կոնցեսիայի՝ կառավարման, շահագործման և օգտագործման մասին (այսուհետ՝ պայմանագիր).

B. Համաձայն 2002 թվականի մայիսի 17-ին ստորագրված կոնցեսիոն պայմանագրի լրացման և նշված լրացման կատարման նպատակով 2002 թվականի

մայիսի 22-ին կոնցեսիոն պայմանագրով սահմանված «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.»-ի իրավունքներն ու պարտականությունները փոխանցվել են կառավարչին.

C. Պայմանագրի ուժով կառավարիչն ունի բացառիկ իրավունք՝ օգտագործելու օդանավակայանը, որի առնչությամբ 2003 թվականի մարտի 27-ին վերջինիս տրվել է անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման N 1346389 վկայականը.

D. Պայմանագրի ուժով կառավարիչն ունի նաև բացառիկ իրավունք օգտագործելու օդանավակայանի գործունեության մասը կազմող գույքը՝ անկախ պայմանագրի ստորագրման պահին դրա սեփականատիրոջ ով լինելուց և անկախ դրա նկատմամբ գույքային իրավունքներ (այդ թվում՝ օգտագործման իրավունք) ունեցող անձի կամ պետական մարմնի փաստից, այդ թվում՝ պայմանագրի Դ հավելվածում թվարկված գույքը.

Նշված գույքի կազմի մեջ ներառված են նաև «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից օդանավակայանում շահագործվող շենքերը և այդ շենքերով զբաղեցրած հողամասերը.

E. Կառավարությունը կառավարչի հետ քննարկել է «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից օդանավակայանի տարածքում շահագործվող շենքի, այդ շենքով և օդային երթևեկության կառավարման նորակառույց աշտարակի շենքով զբաղեցրած հողամասերի նկատմամբ պայմանագրից բխող կառավարչի ունեցած իրավունքները դադարեցնելու հարցը.

Կողմերը համաձայնվեցին՝

1. Կառավարիչը սույնով հայտնում է իր համաձայնությունը դադարեցնելու պայմանագրից բխող իր ունեցած իրավունքները «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից օդանավակայանի տարածքում շահագործվող շենքի, այդ շենքով և օդային երթևեկության կառավարման նորակառույց աշտարակի շենքով զբաղեցրած հողամասերի նկատմամբ:

2. Կառավարությունը սույնով հաստատում է, որ կառավարիչը, որպես օդանավակայանի բնականոն գործունեությունը պահպանելու համար պատասխանատու անձ, իրավունք ունի պայմանագրի 10.3 -րդ կետի համաձայն հետագայում թարմացնելու Մաստեր Պլանը:

3. Կառավարությունը սույնով հաստատում է նաև, որ եթե որևէ Մաստեր Պլանով նախատեսված լինի, որ «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից օդանավակայանում շահագործվող շենքը և այդ շենքով զբաղեցրած հողամասերն անհրաժեշտ են օդանավակայանի համար, ապա տվյալ շենքի և դրանով զբաղեցրած հողամասերի նկատմամբ օգտագործման իրավունքները կառավարության կողմից կշնորհվեն կառավարչին, և կառավարիչը կքննարկի կառավարության հետ «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ին այլ շենք տեղափոխելու հնարավորությունը: Եթե տվյալ շենքի և դրանով զբաղեցրած հողամասերի նկատմամբ այդ պահի դրությամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը կառավարության կողմից փոխանցված լինի այլ անձի, ապա կառավարությունը կձեռնարկի համապատասխան միջոցներ նշված շենքը և դրանով զբաղեցրած հողամասերը կոնցեսիայի շրջանակներում կառավարչի օգտագործմանը տրամադրելու նպատակով:

4. Սույն թիվ 4 լրացման նոտարական վավերացման և լրացումից բխող պետական գրանցման բոլոր ծախսերը կիրականացվեն կառավարչի կողմից:

5. Սույն թիվ 4 լրացումը պայմանագրի անբաժանելի մասն է:

6. Այն ամենը, ինչը նախատեսված չէ սույն թիվ 4 լրացմամբ, կկարգավորվի պայմանագրի համապատասխան դրույթներով:

7. Կողմերը համաձայնվում են, որ սույն թիվ 4 լրացումը ենթակա է նոտարական վավերացման:

8. Սույն լրացումը կազմված է հայերենով և անգլերենով՝ ____ (_____) հավասարազոր ուժ ունեցող օրինակներից:

Ի վկայություն դրա՝ կողմերը 2010 թվականի _____-ին Երևան քաղաքում կնքեցին սույն թիվ 4 լրացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱՌԱՎԱՐԻՉ

---	---
Արտյոմ Մովսեսյան	Խուան Պաբլո Գեչիջյան
ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ	«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ